ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/93

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 27.06.2018թ. թիվ 03/26-3/11651-18 գրությամբ «ՊՐԻՄԴԻՖ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Աշտարակի քաղաքապետարանի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 25.06.2018թ. թիվ 1045 գրության հիման վրա, 27.06.2018թ. «ՊՐԻՄԴԻՖ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>Աշտարակի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Աշտարակի քաղաքապետարանը 25.06.2018թ. թիվ 1045 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերի ուսումնասիրության նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար Ձեզ եմ տրամադրում ՀՀ Աշտարակի քաղաքապետարանի կարիքների համար ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-18/7 ծածկագրով հայտարարված ընթացակարգի մասնակից «ՊՐԻՄԴԻՖ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները»:

Աշտարակի քաղաքապետարանը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն քաղաքապետարանի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. «ՊՐԻՄԴԻՖ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 27.06.2018թ. գրությամբ դիմել է «ՊՐԻՄԴԻՖ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.06.2018թ. թիվ 03/26-3/11651-18 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր «ՊՐԻՄԴԻՖ» ՍՊԸ-ի տնօրեն Վազգեն Մարգարյանը:

4. ՍՑ-ԷՍ-2018/93 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 27.06.2018թ. թիվ 03/26-3/11651-18 գրությունը և կից փաստաթղթերը, Աշտարակի

քաղաքապետարանի 25.06.2018թ. թիվ 1045 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-18/7 ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-18/7 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 12.06.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 և 20.06.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունները, Ընկերության կողմից ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 18.06.2018թ. տրված եզրակացությունը.

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարանի կարիքների համար՝ Աշտարակ քաղաքի մուտքի հանգույցի բարեկարգման շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-18/7 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՊՐԻՄԴԻՖ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի՝ թիվ 3 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-18/7 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովը 12.06.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության՝

- 7.1 կետով որոշել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «ՊՐԻՄԴԻՖ» ՍՊԸ-ին:
- 8-րդ կետի 8.1 ենթակետով որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված

պայմանների առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե:

- 8-րդ կետի 8.2 ենթակետով որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ուղարկել ծանուցում առաջարկելով հրավերով սահմանված ժամկետում (ծանուցում ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով սահմանված փաստաթղթերը:

Որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու նպատակով՝ 13.06.2018թ. ոչ ավտոմատ եղանակով, «ՊՐԻՄԴԻՖ» ՍՊԸ-ն ծանուցվել է:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված 18.06.2018թ. եզրակացության համաձայն «ՊՐԻՄԴԻՖ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների ընթացքում համախառն եկամուտ չի ունեցել:

Հանձնաժողովը 20.06.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության՝ 3-րդ կետով արձանագրել է, որ «ՊՐԻՄԴԻՖ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ընդհանրապես չի ներկայացրել և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված 18.06.2018թ. եզրակացության համաձայն հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը եղել է 0 (զրո) և որոշել է «ՊՐԻՄԴԻՖ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը մերժել:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ «ՊՐԻՄԴԻՖ» ՍՊԸ-ն նորաստեղծ ընկերություն է, հետևաբար նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտ չի ունեցել, բացի այդ տեղի է ունեցել շփոթմունք, ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-18/7 ծածկագրով գնանշման հարցման հրավերի՝ թիվ 1 հավելված՝ ծավալաթերթ-նախահաշիվը բաղկացած է եղել երեք էջից և Ընկերությունը չի նկատել մնացած երկու էջերը, ուստի հիմք ընդունելով միայն առաջին էջում նշված գինը, մասնակցության հայտ է ներկայացրել, սակայն ավելու ուշ նկատելով հաջորդ երկու էջերը հասկացել է, որ չի կարող ապահովել գնման գործընթացին իր հետագա մասնակցությունը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.
- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի

կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից.

- 63-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարանի կարիքների համար՝ Աշտարակ քաղաքի մուտքի հանգույցի բարեկարգման շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-18/7 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

- 2.4 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝ ֆինանսական միջոցներ.

- 2.5 կետի 3-րդ ենթակետի ա) պարբերության համաձայն՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող՝

- երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից.

- հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի ակտիվների հաշվեկշռային արժեքը.

• 7.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Սույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 18.06.2017թ. տրված եզրակացության համաձայն՝ «ՊՐԻՄԴԻՖ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն օրվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը կազմում է 0 (զրո) ՀՀ դրամ:

- Պատվիրատուի կողմից 13.06.2018թ. համակարգի միջոցով ոչ ավտոման եղանակով «ՊՐԻՄԴԻՖ» ՍՊԸ-ին ուղարկվել է Ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստթղթերը ներկայացնելու վերաբերյալ համապատասխան ծանուցումը, սակայն պահանջվող փաստաթղթերը վերջինիս կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

• 2-րդ հոդվածի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

• 6-րդ հոդվածի՝ 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 6-րդ հոդվածի՝ 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

• 6-րդ հոդվածի՝ 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

• 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

Նկատի ունենալով, որ «ՊՐԻՄԴԻՖ» ՍՊԸ-ն ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 3 հավելվածով՝ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-18/7 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ընկերությունը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, ինչը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՊՐԻՄԴԻՖ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար առկա են Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.06.2018թ. թիվ 03/26-3/11651-18 գրությամբ «ՊՐԻՄԴԻՖ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «ՊՐԻՄԴԻՖ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ